Новые Иерусалимы. Иеротопия и иконография сакральных пространств. Редактор-составитель А. М. Лидов. М., “Индрик”, 2009, 912 с., 389 ил.

Նոր Երուսաղեմներ. Հիերոտոպիա և սրբազան տարածքների պատկերագրությունը: *Խմբագիր, կազմող Ա. Մ. Լիդով, Մոսկվա, «Ինդրիկ», 2009, 912 էջ, 389 նկ.:*

*2009 թ. նոյեմբերի 19-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Նոր Երուսաղեմներ. Հիերոտոպիա * և սրբազան տարածքների պատկերագրությունը» գրքի շնորհանդեսը, որը ներկայացնում էր գաղափարական հեղինակ, գիտական խմբագիր և կազմող Ալեքսեյ Միխայլովիչ Լիդովը: Ա. Լիդովը ռուս հայտնի արվեստաբան է, բյուզանդագետ «Արևելաքրիստոնեական մշակույթ» գիտական կենտրոնի հիմնադիրն ու ղեկավարը: Երկար տարիներ զբաղվել է արևելաքրիստոնեական և բյուզանդական պատկերագրության խնդիրներով, իր գիտական պրպտումները սկսել է մեզ համար շատ կարևոր մի հուշարձանի՝ Ախթալայի որմնանկարների գեղարվեստական ու պատկերագրական ծրագրի ուսումնասիրությամբ, որը գիտական արժեքավոր աշխատանք է:*

«Նոր Երուսաղեմներ. Հիերոտոպիա և սրբազան տարածքների պատկերագրությունը» ժողովածուում զետեղված են տարբեր հեղինակների տնական ու բազմակողմանի գիտական ուսումնասիրությունների մի մասը միայն, որի աշխատանքները Ա. Լիդովը սկսել էր դեռ 1990-ականներին և շարունակում է առ այսօր՝ հետևողականորեն զարգացնելով, խորացնելով ու ընդլայնելով հետազոտության սահմանները: Այս շարքի անդրանիկ ժողովածուն, որ վերնագրված է «Երուսաղեմը ռուսական մշակույթում», լույս տեսավ 1994 թ.: Դրան հաջորդեցին «Արևելաքրիստոնեական տաճար. ծիսակարգ և արվեստ» (1994 թ.), «Հրաշագործ սրբապատկերները Բյուզանդիայում և Հին Ռուսիայում» (1996 թ.), «Խորանակալ. ծագումը-զարգացումը-խորհրդաբանությունը» (2000 թ.), «Արևելաքրիստոնեական մասունքներ» (2003 թ.), «Հիերոտոպիա. սրբազան տարածությունների ստեղծումը Բյուզանդիայում ու Հին Ռուսիայում» (2006 թ.), «Նոր Երուսաղեմներ. սրբազան տարածքների տեղափոխման ավանդույթը քրիստոնեական մշակույթում» (2006 թ.), «Հիերոտոպիա. սրբազան տարածքների համեմատական վերլուծություն» (2009 թ.): Այս բոլոր թեմաները ծավալվում են մի հիմնարար գաղափարի շուրջ, որը վերաբերում է տարածքի սրբացման և տեղափոխման (վերստեղծման կամ կրկնօրինակման) գաղափարին ու միջնադարյան կայուն ավանդույթին, որի դերը նշանակալից էր քրիստոնեական պատկերացումների և աշխարհայացքի ձևավորման համար: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ մասնագիտական գրականության մեջ չկար որոշակի մի տերմին կամ, ավելի լայն իմաստով, տեսություն, որը կնպաստեր այս գաղափարի ավելի ստույգ ձևակերպմանն ու համակարգված ուսումնասիրմանը: Հենց այդպիսի մի տեսության, ինչպես նաև մասնագիտական տերմինի մշակմամբ հանդես եկավ Ա. Լիդովը՝ հրատարակելով իր «Հիերոտոպիա. Տարածական սրբապատկերնե-

---

* *Հիերոտոպիա բառը թարգմանված չէ, քանի որ տերմին է և կիրառվում է իր հունարեն ձևով՝ կազմված* հիերոսե *– սրբազան և* տոպոսե *– վայր, տարածք կամ հասկացություն բառերից:*

ը և պատկեր-միջնորդները բյուզանդական մշակույթում» (2009 թ.) տեսական բնույթի մենագրությունը:

Խնդրո առարկա ժողովածուն ծավալուն մի աշխատանք է, որտեղ ներկայացված են ռուսաստանյան, եվրոպական ու ամերիկյան մի քանի տասնյակ գիտնականների (37) ուսումնասիրություններ՝ նվիրված Նոր կամ Երկնային Երուսաղեմի խորհրդաբանական կերպարի մեկնաբանությանն ու վերջինիս բազմաթիվ ուղղակի և անուղղակի կրկնություններին (վերարտադրություններին) քրիստոնեական աշխարհի տարբեր անկյուններում: Իհարկե, նման օրինակներ բազմաթիվ են արդեն իսկ մեկ քրիստոնեական երկրի սահմաններում, սակայն հեղինակի կողմից գիտակցաբար կատարվել է ընտրություն՝ ներկայացնելով ամեն երկրից մեկական ուսումնասիրություն՝ ընդգրկելով V–ից XIX–XX դդ.: Կարելի է ասել, որ միջնադարագետների շրջանում սա թերևս առաջին փորձն է ուսումնասիրությունները կենտրոնացնելու, հատկապես սրբազան տարածքների խորհրդանշային տեղափոխման փաստերը գիտական գրականության մեջ լայնորեն արծարծելու: Հիմնվելով հիերոտոպիայի տեսության վրա՝ ժողովածուում զետեղված հոդվածների հեղինակները փորձել են ցույց տալ, որ սրբազան տարածքների ստեղծման կամ վերարտադրման գաղափարը, որ բխում էր միջնադարյան սիմվոլիկ պատկերացումներից, կարող է դիտարկվել որպես միջնադարյան մարդու գործունեության մի յուրահատուկ ոլորտ, որը մեծապես պայմանավորված էր ինչպես ընդհանուր հոգևոր կողմնորոշմամբ ու դրանից բխող անհրաժեշտությամբ, այնպես էլ կրոնական և քաղաքական կարևոր իրադարձություններով: Նոր կամ Երկնային Երուսաղեմի խորհրդաբանության առանցքային նշանակությունը միջնադարյան մարդու համար պայմանավորված էր Աստվածային դրախտի, ինչպես նաև Փրկության ու Հավերժական կյանքի պատկերացումներով, որ թափանցել էին միջնադարյան մշակույթի գրեթե բոլոր ոլորտները:

Ժողովածուի թեմաներից մեկը ներկայացված է հենց Ա. Լիդովի կողմից և վերնագրված է՝ «Սրբազան կրակը. Նոր Երուսաղեմների ստեղծման հիերոտոպիկ և արվեստաբանական տեսանկյունները»: Ուսումնասիրությունը շոշափում է մասնագիտական գրականության մեջ դեռևս ուշադրության չարժանացած Երուսաղեմյան հրաշք համարվող Սրբազան Կրակը՝ որպես սրբազան մասունք և Նոր Երուսաղեմի խորհրդանիշ՝ շեշտադրելով հատկապես վերջինիս պատմագեղարվեստական հատկանիշները: Դա է պատճառը, որ Սրբազան Կրակն առանց աշխարհագրական սահմանափակումների հասնում էր քրիստոնեական երկրների ամենահեռավոր անկյունները՝ նպաստելով տեղական ավանդույթների ձևավորմանն ու հաստատմանը: Հետաքրքրական է, որ միջնադարյան ծիսական աշտանակները, որ կային տարբեր երկրներում, ունեին հստակ ձևավորված պատկերագրություն՝ կրկնելով Տիրոջ գերեզմանը պսակող տաղավարիկը՝ խորհրդավոր Երկնային Երուսաղեմը: Այս ավանդույթի հետ են կապվում նաև Եվրոպայում լայն տարածում գտած մոնումենտալ «ննջեցյալների աշտանակները», որ կառուցվում էին գերեզմաններում՝ հետզհետե վերածվելով եկեղեցական կառույցի բաղկացուցիչ մասի՝ մուտքը եզրավորող աշտարակների:

Չանդրադառնալով ժողովածուի յուրաքանչյուր հոդվածին՝ հիշատակենք միայն մի քանիսը. «Նոր Երուսաղեմի դիրքը միջնադարյան քարտեզներում» (Ա. Պոդոսինով), «Կոստանդնուպոլիսը՝ Նոր Երուսաղեմ, սրբազան տարածքի ու քաղաքական աստվածաբանության հատման կետում» (Պ. Գուրան), «Մցխեթան որպես Նոր Երուսաղեմ. «սբ. Նինոյի վարքագրության» հիերոտոպիան» (Մ. Չխարտիշվիլի), «Կայսերական պալատները և Երկնային Երուսաղեմները. ուշ անտիկ շրջանի իրական և իդեալական պալատները» (Մ.-Կ. Կարիլէ), «Հիերոտոպիա, Երուսաղեմ և սբ. Խաչափայտը» (Բ. Բաերտ), «Ուխտագնացությունը և «սրբությունների» Եվրոպա տեղափոխման առանձնահատկությունները» (Ա. Մուսին), «Նոր Երուսաղեմը Բալկաններում. սրբազան տարածքների տեղափոխման տեղական ավանդույթները» (Ե. Երդելյան), «Ամերիկյան «Նոր Երուսաղեմները» 1690–1890 թթ.» (Ջ. Կարր), «Նոր «Նոր Երուսաղեմը» Երուսաղեմի համար» (Ռ. Օստերհուդ):

Այս ժողովածուում, ինչպես նախորդ մի քանիսում, անդրադարձ կա նաև հայկական նյութին, որի մասին հարկ է խոսել ավելի հանգամանալից: Ուսումնասիրությունը, որ վերնագրված է «Նոր Երուսաղեմը միջնադարյան Հայաստանի տարածական հորինվածքներում ու ճարտարապետական ձևերում», ներկայացրել է ճարտարապետության դոկտոր Արմեն Ղազարյանը: Հեղինակը բացահայտել է թեման՝ ներկայացնելով լիովին նոր տեսակետներ ու վերջին ժամանակների ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ եկած հետաքրքիր ու խիստ կարևոր մանրամասներ:

Չնայած այն բանին, որ հայկական միջնադարյան աղբյուրներում Նոր Երուսաղեմի կերպարի վերարտադրման մասին տվյալները բացակայում են, այնուամենայնիվ, հենց իրենք հուշարձանները վկայում են նման բազմակի անդրադարձների մասին: Ա. Ղազարյանն արդարացիորեն նշում է, որ Նոր Երուսաղեմի թեման Հայաստանում աննախադեպ զարգացում է ունեցել, քանի որ հենց այստեղ է, որ ի հայտ են եկել նման մտահղացման ամենավաղ օրինակները քրիստոնյա աշխարհում: Միևնույն ժամանակ զարմանալի է, ինչպես ճիշտ նկատում է հեղինակը, որ Նոր Երուսաղեմի թեման բոլորովին դուրս է մնացել հայ ճարտարապետությունն ուսումնասիրողների տեսադաշտից: Ըստ Ա. Ղազարյանի՝ հայ ճարտարապետության մեջ այս ավանդույթի սկիզբը կապվում է Կոմիտաս կաթողիկոսի հետ (613-628)՝ վառ կերպով արտահայտված Սբ. Հռիփսիմեի (618 կամ 613-620) և Սբ. Էջմիածնի տաճարներում (վերակառուցումը մոտ 620 թ.): Հեղինակի կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ Էջմիածնի տաճարի թմբուկի, որ մինչ այդ վերագրվում էր XVII դ., 2/3-ը վերաբերվում է VII դ. առաջին կեսին՝ Կոմիտասի ժամանակաշրջանին, իսկ տաճարի ծածկը, ըստ վերակառուցման, եղել է հովհարաձև՝ նման Տիրոջ գերեզմանի ճարտարապետական ձևերին: Հռիփսիմեն, մի շարք առանձնահատկություններից բացի, աղերսվում է Կոստանդնուպոլսի Սբ. Սոֆիայի հետ՝ հանդիսանալով վերջինիս շատ ինքնատիպ մեկնաբանումը:

Փաստ է, որ Կոմիտաս կաթողիկոսի նախաձեռնած կառույցները մեծ նշանակություն են ունեցել հայ ճարտարապետության հետագա զարգացման, հատկապես XI դ. Անիի և XIII դ. վանքային մի շարք հայտնի համալիրների ճարտարապետական կերպարի ձևավորման համար: Լինելով հայկական Առաքելական Եկեղեցու մեծ նվիրյալը, Կոմիտաս կաթողիկոսը միևնույն ժամանակ սերմանում էր բյուզանդական մշակութային արժեքները, և այս տեսակետը էապես փոխում է մեր պատկերացումները ժամանակաշրջանի մասին:

Անդրադարձը Նոր Երուսաղեմի խորհրդաբանական և պատկերագրական կերպարին բեղմնավոր է եղել նաև Ներսես Գ (Շինարար) կաթողիկոսի օրոք (641-661): Այս իմաստով բացառիկ է Զվարթնոցի կլոր տաճարը՝ տաճար-մարտիրիոնը, որի ճարտարապետական հորինվածքը ներշնչված է Հարության Ռոտոնդայի կերպարից: Բացի քրիստոնեական կարևորագույն սրբավայրի իրական ճարտարապետական ձևերից, այս կառույցում խտացել են նաև խորհրդաբանական Երկնային Երուսաղեմի կամ Դրախտի մասին համաքրիստոնեական, ինչպես նաև տեղական պատկերացումները: Ա. Ղազարյանի կարևորագույն բացահայտումներից մեկը Ներսես կաթողիկոսի կողմից իրականացված սրբազան տարածքի (սրբավայրերի) տեղափոխման (վերարտադրման) յուրահատուկ ծրագիրն է պատմական Հայաստանում՝ կրկնված երկու անգամ: Խոսքը վերաբերում է Զվարթնոցին՝ նման Երուսաղեմի Հարության տաճարին, Ներսեսի կողմից Դվինի մայր տաճարի վերակառուցմանը՝ համաձայն Բեթհեղեմի Ծննդյան բազիլիկի, ինչպես նաև Խոր Վիրապի Տիրամորը նվիրված փոքր ութանկյուն եկեղեցին (չի պահպանվել)՝ ներշնչված պաղեստինյան որևէ սրբավայրից: VII դ. 50-ական թվականներին, երբ Ներսես Գ-ն ժամանակավորապես հեռանում է իր ծննդավայրը՝ Տայք, կրկնում է իր մտահղացումը՝ կառուցելով Բանակի տաճարը Զվարթնոցի կամ Հարության Ռոտոնդայի, Իշխանի տաճարը՝ Դվինի կամ Բեթհեղեմի բազիլիկի և Օլթիի փոքր բազմանիստ եկեղեցին՝ Խոր Վիրապի կամ պաղեստինյան նմանատիպ կառույցի օրինակներով:

Իր հոդվածում Ա. Ղազարյանը մի շարք հետաքրքիր մտքեր է արտահայտում՝ անդրադառնալով Անի քաղաքին, նշում է, որ վերջինիս տեղագրության և հորինվածքային առանձնահատկությունները դեռ ուսումնասիրված չեն: Նախնական ուսումնասիրությունները թույլ են տալիս զուգահեռներ անցկացնել Բագրատունյաց մայրաքաղաքի և Կոստանդնուպոլսի հատակագծի, ինչպես նաև Անիի ու կայսերական մայրաքաղաքի կարևորագույն մի շարք կառույցների ճարտարապետական հորինվածքի ու անվանակոչման միջև:

Եվ, ընդհանրապես, Երկնային կամ Նոր Երուսաղեմի թեման շատ տարբեր մեկնաբանություններ է ունեցել հայկական ճարտարապետության մեջ, այդ թվում զանգակատների, երկհարկ դամբարան-եկեղեցիների ու գավիթների հորինվածքներում: Այս նույն ավանդույթը բազմակողմանիորեն առկա է դեկորատիվ-կիրառական՝ եկեղեցական առարկաների ձևավորման մեջ, օրինակ, Սբ. Էջմիածնի տաճարի մանրակերտը (Վան), արծաթյա խնկանոցը և մյուռոնի սրվակը Էջմիածնի գանձարանից կամ ասեղնագործ վարագույրները: Ա. Ղազարյանի ուսումնասիրությունը հստակորեն ցույց է տալիս, թե ինչքան ամուր են եղել Նոր Երուսաղեմի կերպարի վերարտադրման ավանդույթները Հայաստանում՝ ունենալով ինչպես արևելաքրիստոնեական ուղղվածություն, այնպես էլ տեղական յուրահատուկ մեկնաբանումներ:

Ամփոփելով ասենք, որ այս հարուստ ժողովածուն հուշում և ոգեշնչում է մեզ գալիքում իրականացնելու նմանատիպ նախագծեր հայ միջնադարյան մշակույթի համատեքստում՝ շոշափելով հոգևոր գործունեության բազմաթիվ ոլորտներ:

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ